

7935



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«17» 07 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 130 - 24

Նախաձեռնող՝

«ՀՍԿԱ» ՓԲԸ

ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Լենինգրադյան փ./2/31/

Գործունեությունը՝

Սարալանջի գաբրողիորիպների
հանքերակման փեղամասում
երկրաբանահեփախուզական աշխատանքներ
Լոռու մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 130 - 24

«17» հուլիսի 2024թ.

**Սարալանջի գաբրոդիորիտների հանքերակման տեղամասում
երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Նախաձեռնող՝	«ՀՍԿԱ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Տեղադրման վայրը՝	Լոռու մարզ, Սպիտակ համայնք, Սարալանջ բնակավայր

Ներածական մաս. Լոռու մարզի Սարալանջի գաբրոդիորիտների հանքերակման տեղամասում «ՀՍԿԱ» ՓԲԸ-ի կողմից նախատեսվում է 2025-2026թթ.-ի ընթացքում իրականացնել երկրաբանահետախուզական աշխատանքներ:

Նախատեսվող գործունեությունը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է պարզել դրանց համապատասխանությունը ԳՈՍՏ 9479-2011 «Բլոկներ լեռնային ապարներից՝ երեսապատման, ճարտարապետաշինարարական, մեմորիալ և այլ իրերի արտադրության համար» և ՀՍՏ ԳՈՍՏ 8267-95 «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» տեխնիկական պայմաններին:

Նկարագրական մաս. Սարալանջի գաբրոդիորիտների հանքերակման տեղամասը գտնվում է Լոռու մարզի Սարալանջ բնակավայրի վարչական շրջանում, Սարալանջ բնակավայրի բնակելի շինությունից մոտ 220 մ դեպի արևմուտք և զբաղեցնում է 16.0 հա մակերես:

Երկրաբանահետախուզական աշխատանքների տեղամասն իրենից ներկայացնում է տիպիկ լեռնային տարածք՝ խիստ կտրտված ռելիեֆով: Տեղամասի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է միջին էոցենի հասակի հրաբխանստվածքային հրաբխածին ապարներով՝ պորֆիրիտներով, տուֆալիտներով և այլն:



Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է 1770-1870 մ բացարձակ բարձրությունների վրա:

Հայցվող տարածքի աշխարհագրական կոորդինատներն են՝
հյուսիսային լայնության-40°52'4.95"N
արևելյան երկայնության-44° 5'38.43" E

Դիտարկվող գաբրոդիորիտների Սարալանջի հանքերակման տեղամասը իրենից ներկայացնում է մագմայական՝ ինտրուզիվ ապարների զանգվածաձև հանքակուտակ՝ համասեռ կազմով, կայուն ֆիզիկամեխանիկական հատկություններով, չխախտված կամ թույլ խախտված տեղադիրքով:

Համաձայն հայտի տեղեկատվության՝ բուն ուսումնասիրվող տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չկան: Ուսումնասիրվող տարածքն անմիջական առնչություն չունի ԲՀՊՏ-ների և բնության հուշարձանները հետ:

Ուսումնասիրության ենթակա տարածքի սահմաններում սողանքային երևույթները բացակայում են:

Հայցվող տարածքում՝ հողածածկույթի առումով, գերակշռում են տիպիկ լեռնային սևահողեր և սևահողանման լեռնային մարգագետնատափաստանային հողերը, հողաբուսական շերտի միջին հզորությունը կազմում է 0,20 մ:

Ուսումնասիրության ենթակա տարածքի կոորդինատները WGS-84 (ARMREF-02) համակարգով հետևյալն են.

	Y	X
1.	8423570.85359	4526067.66209
2.	8423493.89937	4526311.80024
3.	8423353.12043	4526402.36698
4.	8423592.35516	4526599.35059
5.	8423476.26684	4526738.07235
6.	8423622.72000	4526810.12640
7.	8423709.71474	4526677.48053
8.	8423763.39219	4526627.44111
9.	8423747.64945	4526612.22754
10.	8423739.78670	4526319.44382
11.	8423713.53132	4526087.33081
12.	8423594.29572	4526079.35670
1.	8423570.85359	4526067.66209

Ուսումնասիրության աշխատանքների սկզբնական փուլում մակերեսային դիտարկումների և փորվածքների տեղերը ճշգրտելու հետ մեկտեղ նախատեսված է իրականացնել տոպոգրաֆիական հանույթ, որի հիմքի վրա աշխատանքների արդյունքներով կկազմվի հանքերակման 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզը:

Գաբրոդիորիտների որակական հատկանիշները որոշելու համար կիրականացվի նմուշարկում՝ հորատանցքերից, հետախուզահորերից, փորձնական բացահանքերից, մերկացումներից: Գաբրոդիորիտները լիցենզավորված լաբորատորիայում կենթարկվեն ֆիզիկամեխանիկական փորձարկումների՝ քիմիական և միներալապետրոգրաֆիական կազմը որոշելու համար:

Դիտարկումների միջոցով կկատարվեն նաև հանքավայրի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ:



Հանքերակման տեղամասում նախատեսվում է 5 հետախուզահորեր, յուրաքանչյուրը՝ 6 մ² մակերեսով, մինչև 5 մ խորությամբ, ընդհանուր՝ 30 մ² մակերեսով և մինչև 3150 մ³ ծավալով, որոնցից կվերցվի մեկական մենաքարային նմուշ:

Ուսումնասիրության տեղամասի այն հատվածներում, որտեղ գաբրոդիորիտների մարմինը մերկանում է, նախատեսված են նաև 5 մերկացումների փաստագրում և նմուշարկում, որոնցից կվերցվեն մեկական մենաքարային նմուշ:

Լեռնային փորվածքներից և բնական մերկացումներից ընդհանուր կվերցվեն 10 մենաքարային նմուշներ:

Ուսումնասիրության աշխատանքներն իրականացնելիս կհորատվի 6-8 հորատանցք՝ 40 մ միջին խորությամբ, ընդհանուր՝ մինչև 320 գծամետր հորատանցքեր:

Հորատման կետերը կտեղադրվեն հնարավորինս մեղմաթեք տեղանքներում, ինչը հնարավորություն կտա հորատող հաստոցի մոտեցմանը: Նախատեսված հորատման աշխատանքները կկատարվեն հորատահրապարակներում՝ ուղղաձիգ հորատմամբ:

Հորատումը կկատարվի ժամանակակից եռսյունակային և երկսյունակային հորատման սարքերով (Atlas Copco CS կամ նմանատիպ հորատող մեքենա), հորատումը կկատարվի միայն PQ (122.6 մմ) տրամագծով, կառաջանան 85.0 մմ տրամագծերով հորատահանուկներ, որոնք կենթարկվեն երկրաբանական փաստագրման, կստուգվեն հորատահանուկի հիմնական ցուցանիշները, կնմուշարկվեն միայն գաբրոդիորիտները, որոնցում հորատահանուկի ընդհանուր երկարությունը կլինի 280 գծ.մ հանուկ, ընդհանուր՝ 56 հանուկային նմուշներ:

Դեպի հորատման հրապարակներ հորատող հաստոցի մոտեցումը կկատարվի օգտագործելով գոյություն ունեցող լեռնային ճանապարհները, բացակայության դեպքում կկառուցվեն նոր ճանապարհներ:

Նախատեսվում է բացել 0,25 կմ ընդհանուր երկարությամբ նոր ճանապարհ՝ դեպի հորատման հարթակներ, վերականգնման ենթակա հողաշերտի ծավալը կկազմի՝ 214 մ³:

Հորատման աշխատանքների ավարտից հետո բոլոր հորատանցքերը կնշագրվեն, կցեմենտացվեն և կփակվեն:

Հորատահրապարակների կառուցման ընթացքում հողաբուսական շերտի պահպանությունը կիրականացվի օրենքով սահմանված միջոցառումներին համապատասխան, տեղափոխման և պահպանման ենթակա կլինի 64 մ³ ծավալով հողային զանգված:

Տեղամասում գաբրոդիորիտների օգտակար հաստվածքից բլոկների ելքը որոշելու համար կիրականացվի փորձնական բացահանքի՝ (5x5x6 մ չափերով) անցում, որտեղից նախատեսված է վերցնել մինչև 150 մ³ գաբրոդիորիտ՝ 100 մ³ թարմ և 50 մ³ վերին խիստ ճեղքավորված հատվածներից, որը կուսումնասիրվի որպես շինարարական խճի արտադրության հումք: Փորձնական հանույթը կիրականացվի տարածքում գոյություն ունեցող լքված բացահանքերից՝ էքսկավատորով:

Նախատեսված աշխատանքների արդյունքում վերցված համախառը, մենաքարային և հորատահանուկային բոլոր նմուշները կենթարկվեն լաբորատոր հետազոտությունների:

Ընդհանուր՝ 67 շարքային, 4 կրկնօրինակ՝ 71 փորձանմուշներ կենթարկվեն ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության:

Ընդհանուր օգտակար հաստվածքի տարբեր խորություններից վերցված 4 նմուշ կենթարկվեն քիմիական անալիզի: Գաբրոդիորիտների միներալային կազմը, կառուցվածքը և փոփոխության աստիճանը որոշելու նպատակով պետրոգրաֆիկական ուսումնասիրության կենթարկվի 2 հղկուկ:

Մետաղական օգտակար հանածոների առկայությունը ստուգելու համար նախատեսվում է սպեկտրալ անալիզի ենթարկել 3 նմուշ: Կորոշվի նաև օգտակար



հանածոյի համապատասխանությունը ճառագայթային անվատանգության նորմերին (համաձայն 2021թ. օգոստոսի 11 N06-Ն հրամանի հավելված N 2-ի շինարարական և երեսապատման քարերի հանքավայրերի ուսումնասիրությանը ներկայացվող պահանջների՝ բաժին 3, ենթակետ 11-ի 3 կետի հանքաքեր շրջաններում տեղաբաշխված շինարարական և երեսապատման քարերի հանքավայրերի ապարներում պետք է որոշվի ազնիվ և հազվագյուտ մետաղների առկայությունը:

Բոլոր լեռնային փորվածքները փաստագրումից, ֆոտոփաստագրումից և նմուշարկումից անմիջապես հետո կվերականգնվեն ամբողջ ծավալի չափով: Հետախուզահորերի անցումից հետո, վերջիններիս փաստագրումից և նմուշարկումից հետո նախատեսվում է փորվածքների հետլցնում: Հետախուզահորերի փաստագրումից և նմուշարկումից հետո հետ կլցվի հորերի անմիջական հարևանությամբ կուտակված 150.0 մ³ լեռնային զանգվածը, այդ թվում՝ 6.0 մ³ հողաշերտը:

Սարալանջի գաբրոդիորիտների հանքերակման տեղամասի սահմաններում երկրաբանական ուսումնասիրությունների ընթացքում բնառեսուրսներից կօգտագործվի միայն ջուր՝ սպասարկող անձնակազմին խմելու ջրով ապահովելու, կենցաղային կարիքների, ինչպես նաև փոշենստեցման նպատակով՝ փորվածքները և ավտոճանապարհները ջրելու համար: Տեխնիկական ջուրը կմատակարարվի ջրցան վացող ավտոմեքենայով, խմելու ջուր՝ շշալցված տարբերակով:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքերի իրականացման ընթացքում հնարավոր են ազդեցություններ մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ: Հիմնական բնապահպանական դիսկեր կարող են հանդիսանալ՝ հետախուզահորերի և հորատահարթակների տարածքներում բուսականության ոչնչացումը, փոշու արտանետումները՝ հողային աշխատանքների արդյունքում, դիզելային վառելիքի այրման արդյունքում առաջացող արտանետումները, տեխնիկայի և ավտոտրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում առաջացող աղմուկը, ծանր տեխնիկայի շահագործման և կայանման ընթացքում վառելիքի և քսայուղերի արտահոսքերը: Դրանց բացառման, նվազեցման ու փոխհատուցման համար նախատեսվել է բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Մթնոլորտային օդն աղտոտող հիմնական նյութերը կարող են լինել շահագործվող տեխնիկա-տրանսպորտային միջոցներից առաջացրած ծխագազերը, ճանապարհների բարեկարգման և հորատման աշխատանքների ընթացքում փոշու արտանետումները:

Շրջակա միջավայր վրա հնարավոր ազդեցությունը կանխելու նպատակով նախատեսվում է հողային աշխատանքների իրականացում հնարավորինս խոնավ եղանակներին և աշխատանքների դադարեցում քամու առկայության դեպքում: Չոր եղանակներին գրունտային ճանապարհներով մեքենաների երթևեկության առավելագույն արագության սահմանափակում: Մթնոլորտային օդի աղտոտումը ծխագազերի արտանետումներով կանխելու նպատակով նախատեսվում է տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործում սարքին վիճակում, տեխնիկական ստուգումների իրականացում: Դիզելային շարժիչների ծխագազերի վնասակար արտանետումների կլանիչներով ապահովում: Անհրաժեշտության դեպքում ճանապարհների ջրցանում՝ ջրցան մեքենայով չոր եղանակին՝ օրական 3 անգամ:

Աշխատանքների ընթացքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները: Հաշվի առնելով դիտարկվող տարածքի հեռավորությունը բնակավայրերից՝ ընտրված տեխնիկական և դաշտային աշխատանքների կարճ ժամանակահատվածը աղմուկի մակարդակը բարձր չի լինի, գումարային հաշվարկային ճայնային բնութագիրը բնակավայրի սահմաններում կգտնվի նորմայի



սահմաններում (նորման 45դԲԱ): Աղմուկի հնարավոր ազդեցությունը կանխելու նպատակով աղմկահարույց մեքենաներում և սարքավորումներում անհրաժեշտության դեպքում՝ կտեղադրվեն խլացուցիչներ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների համար նախատեսված տեխնիկական միջոցների աշխատանքների արդյունքում առաջացող լոկալ թրթռումը չի առաջացնի հնարավոր ազդեցություն:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում արտադրական նպատակով ջրային ռեսուրսներ չեն օգտագործվի՝ չեն առաջանա ջրի արտահոսքեր: Նախատեսվում է ջրցանի այնպիսի ծավալների իրականացում, որը չի առաջացնի արտահոսք: Ստորգետնյա ջրերի աղտոտումը հորատման աշխատանքների ընթացքում բացառելու համար նախատեսվում է ջրի կորստի դեպքում հորատման աշխատանքների անմիջապես դադարեցում:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախատեսված է հորատահրապարակների և ճանապարհների կառուցման ժամանակ հողի վերին շերտի հանում և պահեստավորում: Հողաշերտը կպահվի յուրաքանչյուր բացված հորատահրապարակի անմիջապես հարևանությամբ և բացված ճանապարհների երկայնքով՝ լայնակույտերով (<< կառավարության 2017թ. նոյեմբերի 2-ի N1404-Ն որոշման պահանջների համաձայն): Յուրաքանչյուր պատրաստված հորատահրապարակում, հորատման աշխատանքների ավարտից անմիջապես հետո, բացված լանդշաֆտները կվերականգնվեն պահեստավորված հողաշերտերով՝ ծածկելու միջոցով: Դաշտային աշխատանքների ավարտից հետո կվերականգնվի նաև բացված ճանապարհների լանդշաֆտը պահեստավորված հողաշերտով:

Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը կհաշվարկվի հորատահրապարակների, նոր ճանապարհների ընդհանուր և հետախուզառումների մակերեսից, ընդհանուր կվերականգնվի 0.20 մ հզորությամբ հողաշերտ: Ռեկուլտիվացիայի ենթակա մակերեսը կկազմի 1100 մ², իսկ հաշված մակերեսում ծավալը՝ 220 մ³: Բացված նոր ճանապարհները կվերականգնվեն դաշտային աշխատանքների ավարտից հետո:

Ռեկուլտիվացման աշխատանքները կկատարվեն ձեռքով, աշխատանքների իրականացման արժեքը կկազմի 734070.1 ՀՀ դրամ:

Քանի որ ուսումնասիրվող տարածքի բնական էկոհամակարգերն արդեն իսկ խիստ դեգրադացված են, կենսաբազմազանության վրա ազդեցությունը կլինի ոչ էական և կկրի կարճատև բնույթ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների տեղամասերում թափոնների կուտակում կամ պահեստավորում չի նախատեսվում: Աշխատանքների ընթացքում գոյացող թափոնների բնութագրերի (թափոնների քանակներ, տարեկան ծավալներ) վերաբերյալ տեղեկատվությունը, կառավարմանն ուղղված միջոցառումները նկարագրված են հայտին կից թափոնների կառավարման պլանում:

Երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում առաջացող թափոններն են՝ իրենց սպառողական հատկությունները կորցրած ավտոմոբիլային յուղերի մնացորդներ, բանեցված օդաճնշիչ դողեր, բանեցված կապարե կուտակիչներ և խոտան, յուղոտված լաթեր, կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի/:

Համաձայն նախնական հայտի՝ անբարենպաստ պայմանների, արտակարգ ու վթարային իրավիճակների դեպքում ևս նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնք տրված են հայտի հավելվածում:



Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ազդեցությունը մեղմելու, նվազեցնելու նպատակով նախատեսված է իրականացնել մշտադիտարկումներ որոնցից են՝

1. Մթնոլորտային օդի մշտադիտարկումներ՝ ամիսը մեկ անգամ:
2. Հողային ծածկույթի մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:
3. Կեսաբազմազանության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն

ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 1000000 ՀՀ դրամ:

Պարծառաբանական մաս. օրենսդրությամբ սահմանված կարգով, նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, Լոռու մարզի Սարալանջ բնակավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Լոռու մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ներկայացված բնապահպանական միջոցառումների, մշտադիտարկումների ծրագրի իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:

2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներով՝ իրականացնելով նախնական գնահատման հայտով ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների՝ հողի, օդի, ջրերի, կեսաբազմազանության մշտադիտարկումներ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:

3. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:



4. Անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ՀՍԿԱ» ՓԲԸ-ի կողմից Լոռու մարզի Սարալանջի գաբրոդիորիտների հանքերնակման տեղամասում երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Նելլի Նասիբյան